որում քաղաքի զի թղթաւ տացցի և կամ վաճառեսցի յումեք, պարտ է թուղթն այն ունիլ նումրս և Օրինակել 'ի տան դատաստանի քաղաքին համեմատութեամբ և համարաւ, որ եթէ գուցէ գնող և կամ վաճառող յերկրին կորուսանիցէ թուղթն՝ կարի նշանաւորութեամբ նումրովն գտանել կրկին 'ի տանէ դատաստանի քաղաքին իւրոյ։

ԳԼՈՒԽ ՅԾԲ.

Ով ոք որ կորուսանիցէ թուղթ յերկրին իւրոյ 'ի պատճառէ կերիչ որթանց, և 'ի կիզմանէ հրոյ, և կամ թրջեալ ջրոյ փթեալ և այլն, նա եթէ կացուցանիցէ առաջի տաճնի դատաստանին քաղաքին իւրոյ երիս վկայս 'ի դրացեաց և 'ի գեօղէ իւրմէ, զի նոքա երդմնելով տացեն վկայութիւնս իւրեանց թէ սա այրս հաւատի է Տեառն տանն որ 'ի գեօղն մեղրի և կամ 'ի որում գեղի 'ի փողոցն գասպարէնց, հարաւ կոյս դրացի մարտիրոսի, և հիւսիս կոյս բաղրամի յարևել կոյս դրացի մաղաքիէ, և տունն որոյ յարևելեան կողմանէ առ արևմուտ երկայնութեամբ 240 ուղուկ և լայնութեամբ 160 ուղուկ և թուղթ տանն էր նումր 2814 և այլն և ապա դատաւոր քաղաքին համեմատելով ընդ նումրն դաֆտար օրինակի տացէ նմայ նոյն նշանաւորութեամբ և չափով թուղթ տան նմայ, և սա թուղթս արժանի համարեսցի Տեառն ունիլ որում անուամբ որ